

ՅՈՐԲԵԼԻՆԱԿԱՆ ՀԱՆՂԻՍՈՒԹԻՒՆ  
ՆՈՒԻՐՈՒԱԾ ՍԱՍՈՒԷԼ ԻԼԱՆՃԵԱՆԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,  
ԹԱՏԵՐԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ-ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹԵԱՆ  
65ԱՄԵԱԿԻՆ

Շաբաթ, Յունիս 27ի երեկոյեան ժամը 7:30ին Փասսարիսայի ՀԲԸՄ Ալեք Մանուկեան Կեդրոնի Մշակութային Համալիրին մէջ, Առաջնորդ Սրբապան Հօր նախագահութեամբ տեղի ունեցաւ Յորելինական Հանդիսութիւն՝ նուիրուած Տիար Սամուէլ Իլանճեանի մշակութային, թատերական եւ ազգային-հասարակական գործունէութեան 65ամեակին՝ կազմակերպութեամբ ՀԲԸՄ Արտաւապո թատերախումբի եւ հովանաւորութեամբ Հարաւային Գալիֆորնիայի Շրջանակային Յանձնաժողովի: Գործադրուեցաւ արժանավայել յայտագիր մը:

Բացման խօսքը կատարեց Արա Պապայեան՝ Արեւնապետը Արտաւապո թատերախումբի: Օրուան հանդիսավարն էր Գրիգոր Սաթամեան: Տեղի ունեցաւ սահիկներու ցուցադրութիւն: Իլանճեան ընթանիքի սրտի խօսքը կատարեց Վանտա Եուսուֆեան: Երաժշտական ելոյթ ունեցաւ Ժանէթ Գուլյումճեան-Իլանճեան: Գլխաւոր բանախօսն էր Տոթթ. Գէորգ Քէշիշեան:

Ողջոյնի խօսքով հանդէս եկան Ենուկ Պալիկեան, Վաչէ Պարսումեան, Վահէ Իմաստունեան, Պերճ Շահապեան եւ Սինան Սինանեան: Գնահատագիրներու ընթերցումը կատարեց Թալին Սիմոնեան:

Այս առիթով Առաջնորդ Սրբապան Հօր միջնորդութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը Սուրբ Սահակ – Սուրբ Մեսրոպ Շքանշանով պարգեւատրած էր Պրն. Սամուէլ Իլանճեանը:

Հոգշ. Տ. Պարեպ Ծ. Վրդ. Երէցեան կարդաց Ամենայն Հայոց Հայրապետին հետեւեալ գիրը.:-

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ  
ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱԻԱԿՆ  
ՄԱՅՐ ԱԹՈՂՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾՆԻ  
ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՍԱՍՈՒԷԼ ԻԼԱՆՃԵԱՆ  
ՈՐ Ի ԿԱԼԻՖՈՐՆԻԱ, ԱՄՆ

Գոհունակութեամբ տեղեկացանք ԱՄՆ Հայոց Արեւմտեան Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Յովնան Արք. Տէրտէրեանից, որ առաջիկային հանդիսաւորապէս նշուելու է Ձեր մշակութային, թատերական, հասարակական գործունէութեան 65ամեակը:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքներն ենք յղում Ձեզ՝ հաւատարմոր մեր ժողովրդի արժանաւոր վաւակիր: Մեծարգոյ Պրն. Իլանճեան, բարձր ենք գնահատում Ձեր երկարամեայ ազգանուէր գործունէութիւնը, որ տարիներ շարունակ արդիւնապարդել էք նուիրեալ ծառայութեան բարի արգասիքներով՝ ի խնդիր Սիրիայի, Լիբանանի, այնուհետ նաեւ Ամերիկայի հայորդեաց ազգային-մշակութային կեանքի վարճացման, Սփիւռքի մշակութային կեանքի աշխուժացման շնորհակալ գործում:

Ուրախութեամբ ենք անդրադառնում նաեւ, որ բարի ջանքեր եւ ներդրում էք բերել նոր սերնդի դաստիարակութեան ու կրթութեան առաքելութեան մէջ: Գեղագիտական կրթադաստիարակչական Ձեր բեղուն գործունէութիւնն առաւել արդիւնապարդուեց, երբ ստանձնեցիք Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Հայ Երիտասարդաց Ընկերակցութեան Վարիչ քարտուղարի պատասխանատու պաշտօնը՝ շարունակելով մեր ժողովրդի մատաղ վաւակաց հոգիներում սերմանել հաւատարմութիւն ու նուիրում առ հայոց արուեստն ու մշակոյթը:

Ձեր կեանքի ողջ ընթացքին Դուք դրսևորել էք որդիական անկեղծ սեր ու ծառայութեան պատրաստակամութիւն՝ հանդէպ Հայ Եկեղեցին, հարապար մեր ժողովուրդը, հայ մշակոյթը, արուեստը, եւ Մենք ուրախ ենք, ընդառաջ ԱՄՆ Հայոց Արեւմտեան Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի խնդրանքի, Հայրապետական այսու Կոնդակով շնորհել Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ – ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ պատուոյ բարձր շքանշանը:

Հայրապետիս աղօթքն ու բարի մաղթանքն է, որ Բարձրեալ Տէրը հանապազ պօրավիզ ու աջակից լինի Ձեզ ու Ձեր ընտանեաց անդամներին՝ պարգեւելով քաջառողջ երկար կեանք եւ ապօգուտ ու հայրենանուէր գործոց մշտանորոգ յաջողութիւններ:

*Ողջ լերուք ի Տէր, պօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Սէնջ. ամէն:*

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 17-ն Յունիսի  
յամի Տեառն 2009 եւ ի թուին հայոց ՌՆԾԸ  
Ի Մայրավանս Արբոյ Էջմիածնի  
ընդ համարաւ 517

Ապա Սրբազան Հայրը վերոյիշեալ շքանշանով վարդարեց Պրն. Իլանճեանին կուրծքը եւ շքանշանով մըն ալ պարգեւատրեց Տիկին Ժանէթ Իլանճեանը: Սրբազան Հայրը իր փակման խօսքին մէջ շնորհաւորեց Պրն. Սամուէլ Իլանճեանը եւ գնահատեց ՀԲԸՄ Արտաւապդ Թատերախումբը, որ գեղեցիկ գաղափարը յղացած էր կապմակերպելու յոբելինական այս հանդիսութիւնը: Սրբազան Հօր «Պահպանիչ» օրհնութեան աղօթքով վերջ գտաւ ճոխ յայտագիրը, որուն յաջորդեց հիւրասիրութիւնը, ուր ներկաները առիթը ունեցան շնորհաւորելու Տէր եւ Տիկին Սամուէլ Իլանճեանը: